

ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ

ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ԾԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Ապրիլ 2021



Ապրիլ 24

Դարձեալ մտանք Ապրիլ ամիս...

Մեր ձայները լսելի դարձնելու ամիս...

Անթիւ անմեղ գոհերու յիշատակը վառ պահելու ամիս...

Արդար իրաւունքներ եւ պապենական հողեր պահանջելու ամիս...

Ահաւասիկ լրացաւ 106-րդ տարին եւ մենք տակաւին կը պայքարինք: Կը պայքարինք ընդդէմ անարդարութեան: Կը պայքարինք ընդդէմ անմարդկայնութեան: Կը պայքարինք յանուն հայրենիքի սիրոյ:

Այժմ, աւելի բուռն քան երբեք, որովհետեւ դարձեալ բացուած են մեր վերքերը: Աւելի քան կէս տարի է, որ իւրաքանչիւր հայու փոթորկուած հոգին հանգիստ չունի:

Օրէ օր մեր գոյատեւման սպառնացող վտանգը կը մեծնայ, մինչ միջազգային հանրութիւնը լուռ կը դիտէ:










Միևակ էինք 1915-ին, միևակ էինք 1992-ին եւ միևակ ենք դարձեալ: Սակայն ոչինչ, պատմութեան ամենամուրթ վայրկեաններուն է, որ կը ծնին հերոսներ:







Մէկ բռունցք դարձած՝ 44 օր պայքարեցանք եւ 44 օր բողոքեցինք: Աշխարհի չորս ծագերուն, փողոցներ դարձան եռագոյնի ալեկոծ ծովեր, եւ բոլորը մեզ տեսան... Բոլորը մեզ լսեցին: Ինչպէս ըսած է Չարենց՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ոյժի մէջ է»: Ժամանակն է, որ ապաւինինք միայն ու միայն մեր ուժերուն: Ժամանակն է, որ իւրաքանչիւրս դառնանք մէկ բուռն հայոց հողի, մէկ ծիլը հայոց արտի, մէկ զարկը հայոց բազկի: Ժամանակն է, որ ողջ աշխարհը գիտնայ, թէ այս հազարամեայ ժողովուրդին արեան մէջ կայ պայքարելու խրոխտ ոգի, թէ մեր պապերուն արեամբ ողողուած Սուրբ հողը միայն առիւծ որդիք կը ծնի, եւ թէ ոչինչ ու ոչ ոք պիտի խափանէ մեր սլացքը՝ մինչեւ երազի երկիրը հայրենի, մինչեւ մեր փոքրիկ բնօրրանը վերածուի ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի:

**«Ով հայ ժողովուրդ,
քո միակ փրկութիւնը քո հաւաքական ոյժի մէջ է»**

Եղիշէ Չարենց

Գեղարուեստական եւ վաւերագրական տեսերիզներ Հայոց Ցեղասպանութեան մասին





ԾԻՃԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Հայոց Ցեղասպանութեան զոհերուն նուիրուած յուշարձան է, կառուցուած Երևանի՝ համանուն բլուրի վրայ: Ամեն տարի Ապրիլի 24-ին հարիւր հազարաւոր հայեր և օտարազգիներ կը բարձրանան այստեղ՝ յարգանքի տուրք մատուցելու 1915 թուականին Օսմանեան Կայսրութեան տարածքին մէջ թրջական կառավարութեան իրագործած Հայոց Ցեղասպանութեան զոհերուն:

1965-ին՝ Ցեղասպանութեան 50-րդ տարելիցին, Երևանի մէջ կազմակերպուեցան միլիոնանոց ցոյցեր, որոնց արդիւնքով 1966-ին սկսաւ Ցեղասպանութեան յուշարձանի կառուցումը եւ աւարտեցաւ 1968-ին:

44 մեթր բարձրութեամբ սիւնը կը խորհրդանշէ հայերու վերածնունդը:


12 քարէ սալերը՝ դասաւորուած շրջանագծով, կը ներկայացնեն Արևմտեան Հայաստանի 12 հայաբնակ նահանգները, որոնք ներկայիս կը գտնուին Թուրքիոյ տարածքին մէջ:

Շրջանի կեդրոնը յաւերժական կրակն է: Յուշարձանի շուրջը տարածուող այգիին մէջ կը գտնուին 100 մեթրանոց պատ, որուն վրայ փորագրուած են ջարդերու ենթարկուած ամենայայտնի քաղաքներու և գիւղերու անունները:

1995-ին, յուշահամալիրի տարածքին մէջ բացուեցաւ փոքր ստորգետնեայ թանգարան, որտեղ կարելի է գտնել տեղեկատուութիւն 1915 թ.ի իրադարձութիւններու մասին: Մասնաւորապէս թանգարանին մէջ ներկայացուած են գերմանացի լուսանկարիչներու (թուրքերու դաշնակիցները Առաջին Համաշխարհային պատերազմին), այդ թուին՝ Արմին Վեգների շարք մը լուսանկարները և որոշ հրատարակութիւններ:

Թանգարանին մօտ կը գտնուի պուրակ մը, որտեղ օտարերկրեայ պաշտօնեաները Ցեղասպանութեան զոհերու յիշատակին ծառեր կը տնկեն:

Յուշահամալիրի ճարտարապետներն են՝ Արթիւր Թարխանեանն ու Մաշուր Զալաշեանը:



«ՆԵՄԵՍԻՍ»

ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿ

Այս ամսուան մեր յայտնի դեմքն է Արշալիր Շիրակեան, ծնած՝ 1900 թուականին: Ան պատանի տարիքէն ապրած եւ կազմաւորուած է դաշնակցական մտաւորականներու մտերմութեան մէջ: Այդ իսկ պատճառով, 1915-ին, երբ թրքական պետութիւնը առաջին հարուածները կը հասցնէ


հայ մտաւորականութեան, ան յանձն կ'առնէ փոքրիկ լրագրերի պաշտօնը: 1919-ին ալ առաջիններէն կ'ըլլայ, որ կը ներկայանայ «Նեմեսիս»ի պատասխանատու մարմինին՝ կատարելու իր սրբազան պարտականութիւնը: Ան շուտով կ'ընդգրկուի արդարահատոյց ահաբեկիչներու փաղանգին մէջ:

1920-ի Մարտին, քսանմէկ ամեայ հայորդին մահապատիժի կ'ենթարկէ Վահէ (Եսայեան) Իհասին, որ թուրք ջարդարարներու հետ գործակցելով՝ կազմած էր Պոլսոյ հայ մտաւորականներուն ցուցակը, որոնք 24 Ապրիլ 1915-ին ձերբակալութեան պիտի ենթարկուէին: 1921-ին, ան կ'ահաբեկէ Նաեւ իթթիհատական կառավարութեան վարչապետ՝ Սայիտ Յալիմ փաշան: Եւ վերջապէս, 1922-ին, Արշալիր եւ Արամ Երկանեան միացեալ գրոհով մը գետին կը փռեն Պեհաւտտին Շաքիրն ու Ճեմալ Ազմիս: Աւելի ուշ, Շիրակեան կը հաստատուի Միացեալ Նահանգներ, ուր աշխուժօրէն կը մասնակցի Զ.Յ.Դ.-ի կազմակերպման գործին:

Երկար լռութենէ ետք, 1965-ին լոյս կը տեսնեն Շիրակեանի յուշերը «Կտակն էր Նահատակներուն» վերնագիրին տակ:

1973-ին յաւերժական քուն կը մտնէ հայ ժողովուրդի վրիժառու հերոսը, որ մինչեւ օրս ներշնչանքի մեծ աղբիւր կը հանդիսանայ հայոց նոր սերունդներուն:

Ի՞նչ նորութիւն



Զ.Յ.Դ. Գ.Ե.Մ.-ի Սոնթրեալի եւ Լաւալի «Լեւոն Շանթ» եւ «Բեկոր Աշոտ» մասնաճիւղերը պատրաստած են առցանց երգացանկեր թէ՛ apple music-ի եւ թէ՛ spotify-ի վրայ: Այս երգացանկերը կ'ընդգրկեն աւելի քան 100 ազգային եւ հայրենասիրական երգեր: Նկատի ունենալով այս վերջին ամիսներուն ընթացքին մեր ապրած տագնապալից զգացումները՝ այս երգերը աւելի քան երբեք հոգեհարազատ կը հնչեն: Աւելին, հիմա, որ կը գտնուինք պահանջատիրական Ապրիլի շեմին, անոնք մեր սրտերուն մէջ վառ կը պահեն յոյսի եւ յարատեւ պայքարի բոցերը ու կը սփոփեն մեզ:

Բարի վայելում :)

Ո՞վ կ'ուզէ ըլլալ բազմագէտ

1- Ի՞նչ պատահած է Ապրիլ 1915-ին

- ա) Հայոց Տեղասպանութիւն
- բ) Հրեաներու Տեղասպանութիւն
- գ) Թուրքներու Տեղասպանութիւն
- դ) Եգիպտոսներու Տեղասպանութիւն

2- Որու կը պատկանի սա տողը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ոյժի մէջ է»

- ա) Եղիշէ Պատմիչ
- բ) Եղիշէ Դուրեան
- գ) Եղիշէ Չարենց

3- Յիշէ Տեղասպանութեան նուիրուած 3 տեսերիզներու անուններ, որոնք դիտած ես

- ա)
- բ)
- գ)

4- Հայոց Տեղասպանութեան գոհերուն նուիրուած յուշարձանը կը կոչուի.-

- ա) Եռաբլուր
- բ) Ծիծեռնակաբերդ
- գ) Բաղաբուրջ

5- Ծիծեռնակաբերդի 12 քարէ սալերը կը ներկայացնեն.-

- ա) Արևմտեան Հայաստանի 12 հայաբնակ Նահանգները
- բ) Արեւելեան Հայաստանի 12 հայաբնակ գիւղերը
- գ) Խամսայի Մելիքութիւնները

6- Իսկ 44 մեթր բարձրութեամբ սիւնը կը խորհրդանշէ.-

- ա) Հայերու վերածնունդը
- բ) Չարթօնքի շրջանը
- գ) Պայքարի ոգին

7- Արշալիր Շիրակեանի յուշերու գիրքը կը կոչուի՝

- ա) «Այսպէս Սպաննեցինք»
- բ) «Ապրուած Օրեր»
- գ) «Կտակն էր Նահատակներուն»

8- Արշալիր Շիրակեանի եւ Արամ Երկանեան միացեալ գրոհով զգետնուած են՝

- ա) Պեհաւտտին Շաքիրն ու Ճեմալ Ազմիս
- բ) Թալէաթ Փաշան
- գ) Սուլթան Ապտիլ Համիտը



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Հեռապատճէն (514) 332-4870
Email: sylva@horizonweekly.ca

Թիւր պատրաստեց՝
Արիանէ Թալաքեան